ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/42» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

25. 12. 2018թ.
Ժամը՝ 11:00

ք. Երևան, ՀՀ ԳՆ

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Գաբրիելյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Տեր-Իսահակյան
Մ. Կարապետյան
Տ. Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ապերյան

I. «ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/42» ծածկագրով ընթացակարգի հայտով որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

(Տ. Գաբրիելյան)

1. «Լոնգ Թրեյդ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

II. «ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/42» ծածկագրով ընթացակարգի հայտով որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքների մասին

(Տ. Գաբրիելյան)

1. Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է «Լոնգ Թրեյդ» ՍՊԸ կողմից ներկայացրած փաստաթղթը և արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

Հավելված N 3-ով ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, մասնավորապես Կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ՝ բազմավալենտ, սորբինացված, կուլտուրալ, ակտիվազրկված պատվաստանյութ A Իրան 2005 և AG -VII, O Պան Ասիա-2, Ասիա 1, Sindh-08 տիպերի դեմ: Ընդգծված տիպերը բացակայում են մասնակցի կողմից տրամադրված տեխնիկական բնութագրում:

Ներկայացված չէ նաև հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր (կամ պայմանագրերը) և այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

2. Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները՝ առաջարկել «Լոնգ Թրեյդ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել N 3 հավելվածի շտկված տարբերակը և 1-ին կետում նշված պայմանագիր (կամ պայմանագրերը) և այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Նախագահ ---------- Տ. Գաբրիելյան

Անդամներ ---------- Լ. Տեր-Իսահակյան

---------- Մ. Կարապետյան

---------- Տ. Սարգսյան